

Հրաշալի թեստ-ավանդապատում

Աշտարակցիները մի ավանդություն ունեն այն մասին, թե ինչու՞ են բնիկ հսկա մի գերդաստանի կոչում «Անպետքենց ցեղ» մականունով:

Այդ տոհմի նահապետը (պայմանականորեն նրան առայժմ հենց այդպես էլ կնքենք՝ «Նահապետ») Աշտարակի փողոց-նրբանցքներից մեկում այն ժամանակվա չափանիշներով հսկայական մի գումար է գտնում:

Ուռուցում¹ լսելով համագյուղացիներից մեկի տրտունջը փող կորցրած լինելու մասին, «Նահապետը» հարցնում է դրա չափը, ապա հասկանալով, որ դա հենց իր գտած գումարն է, տնից այն բերում և Ուռուցում նստոտածների ներկայությամբ ամբողջությամբ հանձնում է օրինական տիրոջը:

Վերջինս անչափ ուրախանում է, բայց և իրեն չզսպելով բարձրաձայն դիմում է ներկաներին.

– Տեսա՞ք դուք սրան... ա՛յ քեզ անպետք մարդ: Ա՛ դա, բա մարդ էլ էդքան գումար ձեռք գցի ու հետո իրա ձեռով տանի տա ուրիշի՞ն...՝

Այդպես էլ դրանից հետո այս հիշարժան դրվագին ներկա եղած ժամանակակիցները «Նահապետին» կպցնում են «Անպետք» մականունը, իսկ նրա ժառանգներին՝ «Անպետքենց ցեղ»:

Միբելի՛ ընթերցող, ուշադիր հետևի՛ր այս առթիվ ծագած քո մտքերին ու զգացողություններին և անկե՛ղծ եղիր ինքդ քեզ հետ: Ու՛մ կողմը եղավ քո համակրանքը. «Անպետքի՞», թե՞ «փողի դադրը լավ իմացող» նրա համագյուղացու: Դրանից է կախված այն, թե այսուհետև բարիկաղի լուսավոր, թե՛ խավար կողմում քեզ համարես. որո՞ւմ ես, թե՛ հատիկ:

Այս փոքրիկ պատմության մեջ, ըստ իս, ի՞նչն է ուսանելի: Այն, որ փող կորցրած ու նորից այն գտած աշտարակցու ով լինելն ու նրա թողած սերունդներին հիմա ոչ ոք էլ չի հիշում, իսկ «Անպետքենց ցեղը» ցայսօր բարեհաջող աճում է ու բարգավաճում: Նաև կարծում եմ, որ սրանով ավելի հասկանալի է դառնում Հիսուսի այն խոսքը, թե ձեր գանձերը երկնքում կուտակեք, այլ ոչ թե երկրի վրա...

Ավելացնենք, որ այդ դեպքում բոլորովին կարևոր չէ, թե ձեզ դրա համար ի՞նչ անուն կկպցնեն ձեր ժամանակակիցները, մերձավորներն ու հետագա սերունդները: Եթե դարեր անց հիշեն ձեր անունը կամ կեղծանունը, ուրեմն ձեր ապրած ժամանակին ինչ որ արժեքավոր ու մնայուն բան ունեցել էք ձեր մեջ:

Բհարկե, երբեմն որոշ ճարպիկ կամ երևելի չարերի այնուամենայնիվ հաջողվում է իրենց անունը հիշատակ թողնել գալիք սերունդներին, ինչպես, ասենք, Միկիտան Սաքոն՝ նույն Աշտարակից, կամ Հերոստրատը, որին հաջողվեց դիտմամբ կրակի ճարակ դարձնել աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը՝ Արտեմիսի տաճարը: Ուստի այս առթիվ մեզ այլ բան չի մնում անելու, քան այս փոքրիկ խորհրդածությունը հանձարեղ Լոռեցու խոսքով ավարտելն է.

*«Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՞ծք նրրա չար գործին...»*

03.03.2010 թ.

Խ. Մանասեղյան

¹ Ուռուց - Աշտարակի կենտրոնում գտնվող փոքրիկ հրապարակ